## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ՎՇՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ԻՐԱՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ԻՐԱՔԻ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Իրաքի թեմական վարչությունից ցավով տեղեկացավ օգոստոսի 1-ին Իրաքում տեղի ունեցած ահաբեկչության դեպքերի մասին, որոնց հետևանքով կան զոհեր և վիրավորներ, վնասվել են քրիստոնեական չորս եկեղեցիներ, այդ թվում և՝ Հայ կաթողիկե եկեղեցին: Իրաքի հայոց թեմի Առաջնորդարանը և եկեղեցիները հարձակման չեն ենթարկվել:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր վշտակցությունն է հայտնում բոլոր զոհերի ընտանիքներին և Իրաքի համայն ժողովրդին, մաղթում ապաքինում վիրավորներին՝ աղոթելով, որ Արևելքում հաստատված քրիստոնյա ու իսլամ ժողովուրդների դարավոր բարեկամությունը և խաղաղ գոյակցությունը չվտանգվի նմանօրինակ դատապարտելի բռնարարքներով, խաղաղությունը վերականգնվի տարածաշրջանում, և իրաքաբնակ ժողովուրդը ձեռնամուխ լինի իր ապահով և բարեկեցիկ կյանքի կերտմանը:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԻՐ ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆԵԼ ՀՌՈՄԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը օգոստոսի 1-ին Բաղդադում քրիստոնեական եկեղեցիների դեմ կատարված ահաբեկության առիթով զորակցության և սրտակցության գիր է հղել Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապին:

Հայոց Հայրապետի գրության մեջ մասնավորապես ասվում է. «Մենք ցավում ենք, որ որոշ ծայրահեղական տարրեր փորձում են վտանգել դարավոր բարեկամությունը և խաղաղ գոյակցությունն Արևելքի քրիստոնյա և իսլամ ժողովուրդների միջև, և Մեր աղոթքն ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը հաստատվի մարդկանց հոգիներում, և բռնությունն ու պատերազմը վերանան տարածաշրջանից և ողջ աշխարհից»:

Վեհափառ Հայրապետը նմանատիպ գրություն է առաքել նաև Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Ներսես-Պետրոս ԺԹ Թարմունուն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ